

## Բազմապատկման բաշխական օրենքը գումարման նկատմամբ

Որևէ թիվ երկու թվերի գումարով բազմապատկելու արդյունքը կարելի է ստանալ՝ թիվը բազմապատկելով յուրաքանչյուր գումարելիով և ստացված թվերը գումարելով իրար:

Այս օրենքը կոչվում է բազմապատկման բաշխական օրենք գումարման նկատմամբ:

$$\text{Օրինակ՝ } 19 \cdot (7+8) = 19 \cdot 7 + 19 \cdot 8 = 133 + 152 = 285$$

$$\text{Օրինակ՝ } 194 \cdot 40 + 194 \cdot 60 = 194 \cdot (40+60) = 194 \cdot 100 = 19400$$

Առաջադրանքներ

1. Օգտագործելով բաշխական օրենքը՝ հաշվե՛ք առավել հարմար եղանակով.

Օրինակներ՝

$$194 \cdot 40 + 194 \cdot 60 = 194 \cdot (40+60) = 194 \cdot 100 = 19400$$

$$164 \cdot 80 - 164 \cdot 30 = 164 \cdot (80-30) = 164 \cdot 50 = 8200$$

$$132 \cdot 70 + 70 \cdot 68$$

$$973 \cdot 37 - 27 \cdot 37$$

$$388 \cdot 99 + 12 \cdot 99$$

$$462 \cdot 120 - 462 \cdot 70$$

2. Հաշվե՛ք առավել հարմար եղանակով.

Օրինակներ՝

$$194 \cdot 40 + 194 \cdot 50 + 194 \cdot 10 = 194 \cdot (40 + 50 + 10) = 194 \cdot 100 = 19400$$

$$164 \cdot 80 - 164 \cdot 20 - 164 \cdot 10 = 164 \cdot (80 - 20 - 10) = 164 \cdot 50 = 8200$$

$$251 \cdot 256 + 251 \cdot 122 + 251 \cdot 34$$

$$361 \cdot 145 + 361 \cdot 53 + 361 \cdot 52$$

$$164 \cdot 243 - 164 \cdot 53 - 164 \cdot 9$$

4. Ստուգեք բաշխական օրենքի ճիշտ լինելը՝

$$18 \cdot (7 + 5) = 18 \cdot 7 + 18 \cdot 5$$

$$15 \cdot (18 - 9) = 15 \cdot 18 - 15 \cdot 9$$

5. Հաշվեք արտահայտության արժեքը կիրառելով բաշխական օրենքը.

Օրինակներ՝

$$19 \cdot (7 + 8) = 19 \cdot 7 + 19 \cdot 8 = 133 + 152 = 285$$

$$17 \cdot (9 - 4) = 17 \cdot 9 - 17 \cdot 4 = 153 - 68 = 85$$

$$60 \cdot (9 + 6) =$$

$$(37 + 5) \cdot 20 =$$

$$(10 - 3) \cdot 11 =$$

$$(11 - 9) \cdot 12 =$$

## Խնդիրներ

5. Ջրավազանի մեջ մտնում է 2 խողովակ: Առաջինով մեկ ժամում լցվում է 120 լ ջուր, երկրորդով՝ 140 լ: Եթե միաժամանակ բացվեն երկու խողովակների ծորակները, ապա 5 ժամում որքա՞ն ջուր կլցվի ջրավազանը:

6. Ջրավազանի մեջ մտնում է 2 խողովակ: Առաջինով մեկ ժամում լցվում է 220 լ ջուր, երկրորդով՝ դատարկվում է 170 լ: Եթե միաժամանակ բացվեն երկու խողովակների ծորակները, ապա 4 ժամում որքա՞ն ջուր կլցվի ջրավազանը:

7. Ջրավազանի մեջ մտնում է 2 խողովակ: Առաջինով 3 ժամում լցվում է 360 լ ջուր, երկրորդով՝ դատարկվում է 180 լ: Եթե միաժամանակ բացվեն երկու խողովակների ծորակները, ապա 4 ժամում որքա՞ն ջուր կլցվի ջրավազանը: